ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/54

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2019թ. թիվ 26/26-1/8691-2019 գրությամբ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 22.05.2019թ. թիվ Ե/40/1216-19 գրության հիման վրա, 24.05.2019թ. «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 22.05.2019թ. թիվ Ե/40/1216-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից ս/թ ապրիլի 10-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով «Գնանշման հարցում» ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու ««ՀԱԷԿ» ՓԲԸ №2 ջրընդունիչի և շրջանառու պոմպակայանի ճաղավանդակների ավազաշիթային մաքրում և հակակոռոզիոն ծածկույթի կատարում» աշխատանքներ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 18.04.19թ նիստի թիվ 2 արձանագրությամբ, հայտերի գնահատման նիստը կասեցվել էր, քանի որ նշված կազմակերպության հայտը ստորագրվել էր Ա. Հովոյանի կողմից, որին տրված լիազորագրում նշված չէր, որ նա իրավունք ունի տնօրենի անունից ստորագրելու մրցույթի հայտը:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.17թ որոշման 41-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել էր մեկ աշխատանային օրով՝ հնարավորություն տալով «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

«Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն նիստի կասեցման և լիազորագրի շտկման անհրաժեշտության մասին տեղեկացվել է 19.04.2019թ.-ին էլեկտրոնային գնումների Արմեփս համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ, սակայն սահմանված ժամկետում շտկում չի կատարել: Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 4-ը մայիսի 2017թ որոշման 32-րդ և 45-րդ կետերի պահանջներով, Ձեզ եմ ներկայացնում «Քիմպաշտպաւսնություն» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

3. <u>«Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.05.2019թ.-ին գրությամբ դիմել է «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2019թ. թիվ 26/26-1/8691-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, տեղեկանալով հրավիրված նիստերի օրվա, ժամի և վայրի մասին, ներկայանալով բանավոր կերպով հայտնել է, որ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 10.04.2019թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն:

Ընկերության հայտը ստորագրվել է ընկերության հաշվապահ Ա. Հովոյանի կողմից, ով լիազորվել է հանդես գալու և ստորագրելու «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով մրցույթի բոլոր փաստաթղթերը:

«Քիմպաշտպանություն» սահմանված ժամկետում լիազորագրի շտկում չի կատարել, քանի որ գտնում են, որ նախ ներկայացված լիազորագիրն եղել է պատշաճ, և ապա քանի որ Ընկերության գնային առաջարկը եղել է ավելի բարձր քան մյուս մասնակիցները, ուստի այդ պատճառով ևս նշված ընթացակարգի մասով ծանուցումներին այլևս չեն հետևել:

4. <u>ՍՑ-LO-2019/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 10.04.2019թ.-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու ««ՀԱԷԿ» ՓԲԸ №2 ջրընդունիչի և շրջանառու պոմպակայանի ճաղավանդակների ավազաշիթային մաքրում և հակակոռոզիոն ծածկույթի կատարում» աշխատանքներ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ.-ի թիվ 2 արձանագրությամբ, հայտերի գնահատման նիստը կասեցվել էր, քանի որ նշված կազմակերպության հայտը ստորագրվել

էր Ա. Հովոյանի կողմից, որին տրված լիազորագրում նշված չէր, որ նա իրավունք ունի տնօրենի անունից ստորագրելու մրցույթի հայտը:

Գնահատող հանձնաժողովը նիստը կասեցրել է մեկ աշխատանային օրով՝ հնարավորություն տալով «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

«Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկում չի կատարել:

16.04.2019թ.-ին «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի տնօրեն Գրիգոր Բարսեղյանի կողմից տրված լիազորագրի համաձայն՝ նույն ընկերության աշխատակից Անի Հովոյանը լիազորվել է առ այն, որ վերջինս իրավունք ունի մասնակցելու, ստորագրելու «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով հրավերի մրցույթին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2019թ. թիվ 26/26-1/8691-2019 գրությամբ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝

գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 10.04.2019թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներակայացրած «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Բարսեղյանի կողմից լիազորված անձ Ա. Հովոյանը ունեցել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-11/19» ծածկագրով հրավերի մրցույթին մասնակցելու և ստորագրելու պատշաճ իրավասություն:

Պետք է հավելել նաև, որ լիազորագրում առկա «հրավերի մրցույթին մասնակցելու և ստորագրելու» իրավասությամբ օժտելը վերաբերել է ցանկացած փաստաթղթի՝ լիազորված անձի կողմից ստորագրման հնարավորության ընձեռնմանը: Ընդ որում հայտը ներկայացնելու կամ ստորագրելու իրավունքի վերապահումը չի կարող, և ոչ մի կերպ, առանձնացվել ու դիտարկվել առանձին՝ չներառելով այն որպես փաստաթղթեր ստորագրելու մեկ ամբողջության մեջ:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակրգի գնահատող հանձնաժողովի կողմից «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին լիազորագրում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալն ոչ իրավաչափ է, ու չի բխել ՀՀ գնումների մասին օրենսդրությունից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը հետևանքն է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների, ուստի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում Մասնակիցը թույլ չի տրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2019թ. թիվ 26/26-1/8691-2019 գրությամբ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**